

## ՖՈՐՄԱՑՅԱՅ ՀՈՎՏԻՆ ԴՈԶԱ ԶԲՎԵԺԸ

**Զուիցերիոյ երկրին տարածութիւնը** բաղդատմամբ ուրիշ երկրներու՝ թէ-պէտ ամենափոքր սահմանի մէջ կ'ամ փոփի, բայց չկայ երկիր մը որ ի-րեն պէս բնութեան գեղեցիկ և հիա-նալի տեսարաններով զարդարուած ըլլայ: Գաղափար մը տալու համար այս երկրին զուարճալի դրիցն և տեսարա-նացը կը ներկայացունեմք հոս 'ի պատ-կերի ֆորմացցա իտալական հովիտը, որ անկանի վալէզէ և դիչինոյ լերանց մէջ, և իր մէջի ջրվէժը՝ որ հելուետեան Ալպեայց առ ջրվէժներուն մէջ ամենէն մեծն և գեղեցիկն կրնայ համարուիլ: Ճանապարհորդն երկու ճամբով կրնայ երթալ առ այս ջրվէժը, որոց իւրաքան-չիւրն ալ ունի իրեն առանձին եղակա-նութիւնն և գեղեցկութիւնը: Մին ա-րեմտակողմն է, որ Հռոդանոսի հովտէն ու կրիծիոնի սառներէն, և միւսը հա-րաւակողմը՝ որ Անդիկորի զուարճալի հովտէն կ'անցնի: Այս երկրորդ ճամ-բով գնացողին առջին կամաց կամաց կը սկըսին անհետանալ շագանակի ծա-ռատունկներն, այդիներն և թզոց ան-տառակներն, տեղի տալով ցրտային գաւառաց տնկոց: Բայց ճանապարհոր-դին վրայ ամեն բանէ աւելի տպաւո-րութիւն ընողն այն է որ ալ չեն երեսիր իտալական գեղեցիկ տուներն իրենց ծիծաղադէմ պարտէզներովն, այլ տը-խուր ամսոյութիւն մ'է որ կը տիրէ շուր-ջանակի: Սակայն եթէ ճանապարհորդն սիրտ ընէ շարունակել իւր ճամբան այս տիսուր լուսութեան մէջ, կը լսէ յան-կարծ հեռուէն որոտման նման ձայն մը, և այնպէս կը կարծէ թէ լեռներն կը դողան: Բայց որչափ յառաջէ, այս որոտման ձայնն տակաւ կը նուազի, և ահա ջրվէժ մ'է կ'ելլայ առջին, որ մե-ծաւ թափով 400 ոտք սեպացեալ բարձրութենէ դէպ 'ի անդունդ կը դա-հավիժի:

Բայց ուղեորն տակաւին հեղեղատին ամենագեղեցիկ դիրքը հասած չէ: Դեռ աւելի դէպ 'ի լեռան գագաթն յառա-

ջելով, վերջապէս գիւղական տնակ մը կը տեսնայ, որ և կ'երեւի մեր առաջի-կայ պատկերին վրայ ընթերցողին ա-ջակողմը, և այս տնակը ճանապարհոր-դաց համար իջևաննելու բնակարան մ'է: Երբ հոս հասնի ճանապարհորդն, ալ ջրվէժին ամենագեղեցիկ դիրքն գտած է. և տեսնելով այնքան բարձրութենէ գեղեցիկ կերպով 'ի վար գահավիժելը, կը պքանչանայ այն հիանալի տեսարա-նին առջին, և չի տարակուսիր հաստա-տելու որ Զուիցերի բոլոր եւրոպիոյ, թերեւս և բոլոր աշխարհիս մէջ, բնու-թեան տեսարանաց գեղեցկութեան մասին առաջին երկիրն է:

## Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն<sup>1</sup>

### ՍԱՄԱՐԻԱ

Լեսոն գարիզին և անոր վրայի տաձարը. — Այսքան, Զրուրե Յակոբայ և Գերեզման Յովսենիայ. — Սամարիա կամ Սեբաստիա քաղաք. — Լիւդյա, Սարոն մարդագետին. — Կեսարիա Պաղեստինոյ և Սկլովմ.

**Ասկէ առաջ մեր խօսակցութեան** նիւթն գալիլիա գաւառն եղած էր, ո-րուն մի առ մի երեսելի քաղաքաց, գե-տոց, դաշտաց, լերանց ու կրօնական և քաղաքական յիշատակարանաց վրայ խօսելնէս ետքը, կ'անցնիմք հիմա Սա-մարիոյ, որ և սա ոչ ինչ նուազ քան զառաջինն՝ հետաքրքրական է իր կրօ-նական և քաղաքական պտտմութեամ-բը և յիշատակարաններովը:

Սամարիոյ պատմութիւնը բոլորովին կը տարբերի Պաղեստինու ուրիշ ժողո-վը ըստ և գաւառաց պատմութենէն. և ութ և տասն դարերէ 'ի վեր թէպէտ և իր չորս կողմը մեծամեծ քաղաքական կերպարանափոխութիւններ տեղի ու-նեցան, այլ Սամարիա միշտ անարատ